ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

19-րդ դարի երկրոդ կեսին Արցախի տնտեսական-քաղաքական-մշակութային կյանքում տեղ գտած շրջադարձը և առաջավոր մտքի վերելքը զգալիորեն կապված և պայմանավորված էին Արևելահայ հատվածում, ինչպես նաև Ռուսաստանում, Անդրկովկասում իրագործվող արմատական փոփոխությունների հետ, որոնք ուղղակի ազդեցություն էին թողնում նաև հայ հասարակական-քաղաքական շարժումների վրա: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթացը շոշափում էր նաև հոգևոր կյանքի ոլորտը: Նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաև ժողովրդական լուսավորության ասպարեզում: Արցախի ժողովուրդը ևս մոտիկից հաղորդակցվում է արևելահայ հատվածում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին: Ազգային զարթոնքը, ժողովրդական ինքնագիտակցության բերելու անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին կրթական համակարգից, աշխարհականացնել ու դեմոկրատացնել դպրոցը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 19-րդ դարի 50-60-ական թթ. սկսած ռուսական առաջավոր մշակույթի ազդեցությամբ հայ իրականության մեջ անհամեմատ սկսեց զարգանալ կրթական գործն ու մանկավարժական միտքը: Ասպարեզ են մտնում Ռուսաստանում և Եվրոպայում մանկավարժություն ուսած մասնագետ պրակտիկ մանկավարժներ՝ Ղ.Աղայան, Ա.Բահաթրյան, Ն.Տեր-Ղևոնդյան, Ս.Բեկզադյան, Ս.Մանդինյան, Խորեն Ստեփանեն և ուրիշներ: Նրանց հետ միասին երկարամյա կամ կարճատև մանկավարժական գործունեություն են ունենում նաև հայ գրողներից շատերը: Նրանք իրենց հրապարակախոսական հոդվածներում և գեղարվեստական

գործերում ուսուցման, դաստիարակության վերաբերյալ բազմազան խնդիրներ են արծարծում, քննարկում մանկավարժական կարևոր հարցեր: Նկատի ունենք Պ.Շանշյանին, Պերճ Պռոշյանին, Ռաֆֆուն, Մուրացանին և ուրիշների: Լուսավորության տարածման, դպրոցական գործի զարգացման բնագավառում հսկայական դեր կատարեց ժամանակի պարբերական մամուլը: Լույս տեսնող շատ պարբերականներ արտահայտում էին դեմոկրատական խավերի տրամադրություններն ու հայացքները: Օրինակ, «Հյուսիսափայլ»-ի (1858-1864թթ.) շուրջ համախմբված հասարակական-քաղաքական առաջադեմ գործիչների ու գրողների շարքում էին նաև Մ.Նալբանդյանը, Ս.Նազարյանցը, Ս.Շահազիզը, Ռ.Պատկանյանը, Պ.Պռոշյանը և ուրիշներ: Ուշագրավ է այն, որ 50-60-ական թթ. սկսած հայերեն լույս են տեսնում մանկավարժական մի շարք ամսագրեր ու թերթեր՝ «Դպրոց», «Դաստիարակ», «Մանկավարժական թերթ», «Վարժարան», «Մանկավարժանոց» և այլն: Ստեղծվում են մի շարք կուլտուրա-կան-կրթական հիմնարկներ և ընկերություններ: Մեծ դեր կատարեցին նաև Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների հայ ուսանողները, որոնք սերտորեն կապված էին ժամանակի առաջավոր ռուս մտավորականների ու գործիչների հետ:

19-րդ դարի 50-60-ական թթ. Ռուսաստանում, ինչպես և Անդրկովկասում ծավալվող հասարակական-քաղաքական և մանկավարժական շարժումը իր բարերար ազդեցությունն է ունենում նաև Արցախում. այստեղ ևս սկսում է զարգանալ հայ դպրոցը և մանկավարժական միտքը: Արցախում հետզհետե սկսեցին բացվել արական, իգական, միդասյա, երկդասյա երկսեռ դպրոցներ: Ըստ պաշտոնական տվյալների 1850-ական թվականներին Արցախի թեմում քիչ դպրոցներ բացվեցին: 1853թ. Ս.Էջմիածնի Սինոդին ներկայացրած Արցախի կոնսիստորիայի վիճակագրական տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ Արցախի միակ ծխական դպրոցը Նուխիում էր, որը բացվել էր 1838 թվականին: Նուխի քաղաքում գործում էր նաև ազգային հոգևոր դպրոցը, որն ուներ 2 դասարան, 2 պատրաստական, 5 ուսուցիչ և 176 աշակերտ[1]: Հոգևոր դպրոցում դասավանդում էին կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, հայոց և ընդհանուր պատմություն, Հայաստանի և ընդհանուր աշխարհագրություն, երկրաչափու-

---

[1] ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 49:

թյուն, բնական պատմություն, հանգաբանություն, երգեցողություն (կրոնական երգեր), մարմնամարզություն և վայելչագրություն:

Դպրոցական գործի վիճակը դառնում է ամենայն հայոց կաթողիկոսի ուշադրության առարկան: Նա 1858թ. առաջարկում է Նուխի գավառի Նիժ գյուղում (ուտիախոս) բաց անել ծխական դպրոց, սակայն տեղական բնակիչների կողմից հետաձգվում է այդ կարևոր գործը: Գևորգ կաթողիկոսի առաջարկությամբ 1857-1858 թթ. վանական, ծխական դպրոցներ բացվեցին Ամարասի ու Գանձասարի վանքերում: Երեխաներին այդտեղ սովորեցնում էին գլխավորապես հայոց լեզվով: Ամարասի դպրոցը պատրաստում էր հոգևորականներ, Գնաձասարի դպրոցը՝ տարրական գրագիտության մի հիմնարկություն էր թե՛ հոգևորականների և թե՛ աշխարահակների համար:

Լուրջ բաց էր այն, որ ծխական և թեմական դպրոցները չունեին մշակված միասնական կանոններ: Միայն 1867թ. Գևորգ Դ. Կաթողիկոսը էջմիածնի միաբաններից կազմում է մի հանձնաժողով, որը պիտի մշակեր դպրոցական ուսումնական կանոնադրություն[1]: 1868թ. հուլիսին ուսումնական հանձնաժողովը կաթողիկոսի անունից թեմերի առաջ խնդիր է դնում՝ յուրաքանչյուր գյուղում բացել դպրոցը. «Գյուղերից եկեղեցիքը,- ասված է այդ առաջադրանքի մեջ,- եթե ունին սեփական դրամ, նոցա տոկոսիքեն մասնավոր թոշակ յատկացնեն, յուրյանց դպրոցներում, և երբ ոչ չեն բավեր նոքա դրամագլխեն միայն մի մասը ծախ անեն, գյուղական ազգային մանկունքը բոլորովին տգիտության մեջ չթողնելու համար»[2]: Նույն թվականին հրապարակվում են ծխական դպրոցների կանոնները, որոնք կոչվում են «Կանոնք Յաղագս ծխական հոգևոր դպրոցաց հայոց»: Այս կանոններով առաջին անգամ փորձ էր արվում կարգավորել տարածում գտնող ժողովրդական տարրական կրթական հաստատությունները, սահմանել նրանց ենթակայության հարցը: Կանոնների առաջին հոդվածը արձանագրում էր, որ «ծխական կամ սկզբնական կոչին այնոքիկ եկեղեցկանա դպրոցաց ոտք գտանին առ յուաքնչյուր եկեղեցեավ»[3]: Ըստ այդ կանոնների՝ բոլոր եկեղեցիները պարտավոր էին ունենալ մեկական ծխական դպրոց: Այս

---

[1] Տե՛ս «Դպրոց», 1875, Վաղարշապատ, մաս Ա, թիվ 7, էջ 244:
[2] «Արարատ», 1868, թիվ 3, էջ 35:
[3] Նույն տեղում, թիվ 6, էջ 35:

շրջանում Արցախի թեմում նորաբաց դպրոցների մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ աղյուսակից:

Ցանկ 1960-70-ական թթ. Արցախի թեմում բացված եկեղեցական-ծխական և մասնավոր դպրոցների[1]

Թիվ ը/կ	Շուշիի թեմում և քաղաքում	Դպրոց	Դասարան	Աշակերտ	Ուսուցիչ
1	2	3	4	5	6
1.	Թեմական	1	3	250	11
2.	Իգական	1	2	40	2
3.	Եկեղեցական-ծխական	2	2	60	2
4.	Մասնավոր	3	3	70	3
5.	Ղարաղշլար (եկեղ.-ծխ.)	1	1	28	1
6.	Խանաբադ (նախակրթ.)	1	1	20	1
7.	Բալուջա (նախակրթ.)	1	1	18	1
8.	Խանքենդի(Ստեփ., եկ.-ծխ.)	1	1	25	1
9.	Ավետարանոց(եկեղեց.-ծխ.)	1	1	25	1
10.	Աշան (եկեղ.-ծխ.)	1	1	31	1
11.	Հողորտի (նախակրթ.)	1	1	9	1
12.	Ամարասի վանք (եկեղ.-ծխ.)	1	1	8	1
13.	Վանք (եկեղ.-ծխ.)	1	1	40	1
14.	Էդիլլու (նախակրթ.)	1	1	12	1
15.	Դռավազ (նախակրթ)	1	1	20	1
16.	Քեթուկ (նախակրթ.)	1	1	25	1
17.	Կուսապատ (նախակրթ.)	1	1	18	1
18.	Մարաղա (նախակրթ.)	1	1	30	1
19.	Գայլաթաղ (եկեղեց. ծխ.)	1	1	34	1
20	Գանձասարի վանք (եկ.ծխ.)	1	1	25	1
21.	Կարաչինար (եկ.-ծխ.)	1	1	45	1
22.	Վերին Շեն (նախակրթ.)	1	1	15	1
23.	Ներքին Շեն (նախակրթ.)	1	1	21	1
24.	Մանաշեն (նախակրթ.)	1	1	18	1

[1] Աղյուսակը կազմված է արխիվային տվյալների հիման վրա, ՀՊԱ, Կաթ.դիվ. ֆ. 56, ց. 3, գ. 78: Գ. 52, թ. 15, 16, 17, 18, Բաքվի ՊԱ, ֆ. 309, ց. 1, գ. 330, 395:

1	2	3	4	5	6
	Նուխիի գավառ				
25.	Հոգևոր սեմինարիա	1	4	180	9
26.	Օրիորդաց դպրոց	1	2	30	2
27.	Մասնավոր	1	1	25	1
28.	Վարդաշեն գյուղ (եկ.-ծխ.)	1	1	52	1
29.	Նիժ (նախակրթ.)	1	1	58	1
30.	Բեկլարիստ (նախակրթ.)	1	1	25	1

Ծխական դպրոցները մասսայական, տարրական դպրոցներ էին, որոնք ծնունդ էին առել 1850-60-ական թվականներին (ի հակակշիռ խալֆայական դպրոցների) և գտնվում էին եկեղեցու իրավասության տակ: Կանոնադրությունը կարգավորեց ծխական դպրոցների գոյավիճակը, և հետագայում դրանք լայն տարածում գտան ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Արցախի հայաշատ վայրերում:

Ամենուրեք գյուղերում և քաղաքներում հասարակական վճիռներ են կայացվում՝ բաց անելու ծխական դպրոցներ: Ուշադրության է արժանի հայ մանկավարժության երախտավորներից մեկի՝ Ա.Բահաթրյանի բնութագրումը. «Ժողովրդական կամ ծխական ուսումնարաններ ասելով հասկացվում է մի այնպիսի ուսումնավանդ դաստիարակող հաստատություն, որտեղ հայտնի աստիճանի հասած մի ազգի մանուկները կարող են ստանալ կրթություն, այնպիսի կրթություն, որը օգտակար է այդ ազգի բոլոր անդամների համար, առանց զանազանելու ժողովրդի դասակարգերը և սեռը, և որը սորա համար ասում է ընդհանուր ազգային կրթություն»[1]: Այսինք, իր թերություններով ու բացերով հանդերձ, ծխական դպրոցները որոշ դեր են կատարել ազգային կրթության գործում:

19-րդ դարի 70-ական և առավելապես 80-ական թթ. Արցախում ակտիվանում է ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Արիստակես Սեդրակյանը, ստանձնելով Շուշվա թեմական դպրոցի տեսչի պաշտոնը (1876-1877 թթ.), մեծ ուշադրություն դարձրեց դպրոցի բարեկարգմանը: Հիշյալ կանոնադրությունից հետո Արցախի թեմում կար 30

[1] «Մանկավարժական թերթ», 1978, թ. 1, էջ 3:

հայկական դպրոց (նախակրթարաններ), ուր աշակերտների թիվը հասնում էր 876-ի, իսկ ուսուցիչները՝ 30-ի, որից 10-ը քահանաներ էին[1]: Շուշվա վանքի եկեղեցում գործում էր 1 ծխական դպրոց՝ 26 աշակերտով: Այդ շրջանում Նուխիում հայոց ազգային հոգևոր դպրոցն ուներ երկու պատրաստական դասարան, 217 աշակերտ և 7 ուսուցիչ[2]: Արխիվային մի այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ հիշյալ շրջանում Շուշի գավառում կար 2 ծխական դպրոց, մեկը Զրաբերդ գավառի Կուսապատ գյուղում, որն ուներ 1 պատրաստականի 2 բաժանմունք, 1 ուսուցիչ և 29 աշակերտ, իսկ մյուսը՝ Վարանդա գավառի Աշան գյուղում, որն ուներ 3 պատրաստական, 1 ուսուցիչ և 30 աշակերտ: Այս երկու դպրոցներում էլ դասավանդում էին հայոց, ռուսաց լեզուներ, թվաբանություն և վայելչագրություն: Հայկական դպրոցներ բացվեցին նաև Նուխվա գավառի Վարդաշեն, Սուրբ Սահակյան, Հասմիկ, Նիժ, Սուրբ Մեսրոբյան և Բեկլարիստ գյուղերում: Հիշյալ նորաբաց յուրաքանչյուր դպրոցում կային 1 առաջին և 2 պատրաստական դասարաններ, որտեղ սովորում էին 267 աշակերտ, իսկ դասավանդող ուսուցիչների թիվը հասնում էր 6-ի: Այս դպրոցների հիմնական նպատակն էր տարրական գրագիտություն սովորեցնել երեխաներին: Դեպքեր էին լինում, երբ դասավանդվող առարկաների վրա ավելացվում էին նաև նախնական գիտելիքներ աշխարհագրությունից, պատմությունից, բնագիտությունից, նկարչությունից և այլն:

Ցարական կառավարությունը 80-ական թթ. անցավ բացարձակ ռուսականացման քաղաքականության, ուժեղացրեց ազգային գաղութային ճնշումը, մայրենի լեզուներով հրատարակությունների արգելակումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսացմամբ, ուղղափառության ստիպողական տարածմամբ և այլն:

Ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված հետադիմական շարժումը ավելի ծանր դրսևորումներ ունեցավ հայ իրականության մեջ: Որքան բարձրանում էր հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցությունը, ուժեղանում ինքնուրույնության ձգտումը, այնքան ինքնակալությունը ավելի էր ուժեղացնում հակամիջոցները, հայկական դպրոցների նկատմամբ սահմա-

---

[1] ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 173:

[2] Տե՛ս նաև Բաքվի ՊԿՊԱ, ֆ. 406, ց. 2, գ. 606, թ. 3:

նելով խիստ հսկողություն: Չնայած դրան, հայ առաջավոր մտավորականությունը չէր նահանջում իր դիրքերից, շարունակում էր պայքարը ժողովրդական զանգվածների շրջանում լուսավորություն տարածելու համար: Ինչպես գրում է Լևոն Սարգսյանը, հայ մտավորականությունը պետք է որ ժողովրդի ստվար մեծամասնությունը ազատի տգիտության կապանքներից ու խալֆայական կրթությունից և ստանալ լավագույն ուսում, իսկ դա կարելի է անել, եթե թվով շատ ուսումնարաններ բացվեին[1]: Արցախում գործում էին 19 հայկական դպրոցներ, որոնցից 7-ը ծխական էր. 745 աշակերտների մեծ մասը սովորում էին Նուխվա հոգևոր և Շուշվա թեմական դպրոցներում: Ուսուցիչների թիվը հասնում էր 20-ի: Նշենք, որ այդ շրջանում Շուշիում կար նաև 1 ռեալական ուսումնարան. այն բացվել էր 1881թ.: Ուսումնարանն ուներ 7 դասարան, 23 ուսուցիչ, 316 աշակերտ, որոնցից 252-ը հայեր էին, 72-ը ռուսներ, 15-ը վրացի, 47 թուրքերը[2]:

Ուսումնարանում մեծ մասամբ սովորում էին ազնվականների և հոգևորականների երեխաներ: Կառավարությունը ավելի մեծ ուշադրություն էր դարձնում արքունի ուսումնարանին, քան ծխական և թեմական դպրոցների տնտեսական առաջադիմությանը: Այս շրջանում հատկապես առաջադիմեց Շուշվա թեմական դպրոցը, որի տեսուչն էր բժիշկ Բալաբեկ Աղասարյանը (1880-1881 թթ.): Նրա ջանքերով թեմական դպրոցում մտցվում էր բնական գիտությունների դասավանդումը: Պետերբուրգից Մկրտիչ Սանասարյանի միջոցով ձեռք են բերվում մի շարք լաբորատոր սարքեր և գործիքներ, դպրոցում ստեղծվում է բնագիտական պատկերների և մոդելների ժողովածու, զգալիորեն աճում է աշակերտների թիվը (հասնում է 500-ի)[3]:

19-րդ դարի 90-ական թվականների կեսերին ցարական կառավարությունը շարունակում էր ազգային դպրոցների նկատմամբ սահմանափակումները: Օրինակ, 1896թ. կառավարությունը փակում է հայկական դպրոցների զգալի մասը, իսկ մի տարի հետո դպրոցները հանձնվում են լուսավորության մինիստրության տնօրինությանը: Սա ինքնին նշանակում է, որ ավանդող առարկաներն ու դպրոցական ծրագրերը ենթարկվում են պետական

---

[1] Լևոն Սարգսյան, ժողովրդական կրթության գործը մեզանում, Մոսկվա, 1892, էջ 5:
[2] ՀՊԱ, ֆ. 56, գ. 78, 543, նաև տե՛ս Ռ. Տեր-Գասպարյան, «Շուշի», 1993, էջ 20:
[3] «Մշակ» 1880, թ. 110:

վերահսկողության, նեղանում են հայոց պատմության, աշխարհագրության և տեղական մյուս առարակների շրջանակները: Կառավարության թիվ 4457 հրամանի համաձայն՝ առաջարկվում էր Արցախի թեմի կառավարիչ, վարդապետ Սաթունյանցին փակել թեմի եկեղեցական ուսումնարանները: Կովկասյան իշխանությունները ձգտում էին դպրոցների գույքի և նյութական միջոցների հաշվին բացել արքունի դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվելու էր ռուսերենով: Սակայն նրանք հանդիպեցին դիմադրության: Էջմիածինը հրաժարվեց իշխանությանը հանձնել փակված դպրոցների մեծ մասի գույքը, պատճառաբանելով, որ դա եկեղեցու սեփականությունն է: Շատ վայրերում գյուղական բնակչությունը հրաժարվում էր նյութական միջոցներ տրամադրել արքունի դպրոցների պահպանությանը, որոշ տեղեր պահվում էին մայրենի լեզվով գաղտնի մասնավոր դպրոցներ: Այդ մասին Լեոն գրում է. «Գյուղերում բացված էին գաղտնի դպրոցներ: Ես նույնիսկ իմացա, որ Կարսի շրջանում այդ գաղտնի դպրոցները ունեն նաև թեմական տեսուչ»[1]: Շուշվա գավառում այդպիսի դպրոցների քանակը հասնում էր 5-ի, յուրաքանչյուր դպրոցում սովորում էր 25-30 աշակերտ: Սակայն տեղական իշխանությունները հետագայում ևս փակում էին նաև նման տիպի դպրոցները: Նրանք ուսուցիչներից ստորագրություն էին վերցնում, որ չեն զբաղվի մասնավոր տներում կամ գաղտնի դպրոցներում երեխաների ուսուցմամբ: Հաճախ նրանց հրամայում էին հեռանալ տվյալ բնակավայրից:

Կանգնելով կատարված փաստի առաջ՝ ինչպես Անդրկովկասի, նմանապես Արցախի հայ հասարակայնությունը զգաստացավ, գիտակցեց, թե ինչ անգնահատելի գանձ է կորցնում և ինչ նշանակություն ունի ազգային դպրոցը իր գոյատևման համար: Հայերը սկսեցին միջոցներ որոնել որևէ կերպ դպրոցները պահպանելու: Հասարակական վճիռներ են կայացվում դպրոց հիմնելու մասին:

Նման պայմաններում էջմիածինը չէր կարող եկեղեցական-ծխական դպրոցները կամովին հանձնել պետությանը: Երբ պետության ներկայացուցիչները փորձեցին դպրոցները փակել՝ հանդիպեցին դիմադրության: Չնայած դրան՝ իշխանությունների կարգադրությամբ Շուշվա և Նուխվա գավառներում

---

[1] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 134:

փակվեցին 7 եկեղեցական-ծխական դպրոցներ:

Այսպիսով, 19-րդ դարի 90-ական թվականների վերջերին՝ ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Արցախի թեմում փակվեցին հայկական շատ դպրոցներ: Երբ հայկական դպրոցները փակվեցին, Խրիմյան կաթողիկոսը կարգադրեց դրանց բոլոր ունեցվածքը դնել փակի տակ, իսկ դպրոցական շենքերի պահպանումը վերապահել տեղական եկեղեցիներին, քանի որ այդ ամենի իրավատերը նրանք էին: Սակայն կառավարության որոշմամբ կովկասյան իշխանությունները առաջարկեցին Սինոդին, որպեսզի դպրոցական գույքը հանձնվի ուսումնական վարչությանը:

Հայերի կրթական գործի դեմ սկսած լայն հալածանքը միայն եկեղեցական-ծխական, իգական դպրոցներով չսահմանափակվեց: Ցարիզմը փակեց նաև թեմական դպրոցները, այդ թվում նաև Շուշվա թեմականը: Լեոն գրել է. «Հազիվ է փոքր ինչ սկսել լուսավորական գործը, երբ նորից մի դժբախտություն էր հարվածում Արցախի թեմի հայ ազգաբնակչությանը»[1]: 1903թ. դեկտեմբերի 10-ին ստացվում է էջմիածնի Սինոդի հրամանը՝ Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի կարգադրությամբ փակելու թեմական դպրոցը: Գանձակի նահանգապետը նախազգուշացնում է դպրոցի տեսուչներին, որպեսզի փակման ժամանակ անկարգություններ չլինեն, քանի որ տեղական իշխանությունները իսկույն կճնշեն դրանք: Դպրոցը փակելուց հետո ամբողջ գույքը ցուցակագրելով, հանձնվում է առաջնորդին, իսկ շինությունը օրենքի համաձայն անցնում է կառավարության ձեռքը՝ իբրև եկեղեցական իշխանությանը պատկանող կալվածք:

Դարավերջին սկսվեց նաև հայ մամուլի ու գրականության հալածանքը: Ազգային հարցեր շոշափող հոդվածները արգելվում էին մամուլում, փակվում են հայոց հրատարակչական ընկերությունները և այլն: Ցարիզմի ճնշող քաղաքականությունը մեծ հուզումներ առաջացրեց Անդրկով-կասի տարբեր վայրերում, այդ թվում նաև Շուշի և Նուխի քաղաքներում: Ամենուրեք ժողովրդական պայքարը լայն բնույթ ստացավ, տարածվում էին հեղափոխական կոչեր, թռուցիկներ և այլն: Մասսաների հեղափոխական շարժումից ահաբեկված ցարական կառավարությունը ստիպված էր 1905թ. օգոստոսի 1-ին

---

[1] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս 1914, էջ 578:

թուլտվություն տալ վերաբացելու հայկական դպրոցները: Կայսերահաստատ որոշումների համաձայն՝ տեղական իշխանությունները օգոստոսի 4-ին թույլատրեցին բացել նաև Շուշվա թեմական դպրոցը:

Հայ դպրոցը, որ 10 տարի փակել էր իր դռները, այժմ կանգնում է դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով, ամեն ինչ նորից սկսել: Կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրեց հոգաբարձական ընտրություններ անցկացնել, ուսուցչական խմբեր կազմել և նախապատրաստել դպրոցների բացումը:

Սինոդի վիճակագրական տվյալներով 1906 թվականին Արցախում բացվեցին 23 եկեղեցական-ծխական դպրոցներ, որից 8-ը երկդասյան էին: Միդասյան դպրոցն ուներ 4-ամյա դասընթաց, իսկ երկդասյանը՝ 5-ամյա դասընթաց: 1905թ. հետո հայկական դպրոցների համակարգի մեջ մտնում էին ծխական 4-ամյա և 9-ամյա տարրական դպրոցներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սինոդի վիճակագրություններով 1906-1907թթ. ուսումնական տարում Արցախի ամբողջ թեմում կային 40 հայկական դպրոցներ, որոնցից ամենաշատը երկսեռ երկդասյան դպրոցներն էին: Այդ դպրոցներում սովորող աշակերտության թիվն հասնում էր 1940-ի: 1908-1909թթ. ուսումնական տարում Արցախի դպրոցների թիվը հասավ 64-ի, 25 դպրոց կար, Վարանդա գավառում, 13-ը՝ Դիզակում, 7-ը՝ Խաչենում, 6-ը՝ Ջրաբերդում, 10-ը՝ Նուխիում, 3-ը՝ Շուշի քաղաքում:

Չնայած ցարական բռնակալության պայմաններում ժողովրդական լուսավորության գործը Արցախում գտնվում էր հետադիմական քաղաքականության ազդեցության տակ, երբ պետությունն ամեն կերպ աշխատում էր ժողովրդական զանգվածներին հեռու պահել դպրոցի վրա որևէ ներգործություն ունենալուց, այնուամենայնիվ, ինչպես արևելահայ հատվածում, այնպես էլ Արցախում հայ նոր դպրոցի կազմավորումն ու հետագա զարգացումն ըստ էության խորապես առաջադիմական երևույթ էր: Հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ դարձյալ իր զավակներին մայրենի լեզվով կրթություն տալու, փրկվեց ազգային և կուլտուրական դիմազրկումից: